**«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում Մանկական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

(հունվար-հունիս 2026թ.)

**1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ) գնահատում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է երեխաների կրթության, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում: Կիսամյակի ընթացքում ընդհանուր առմամբ գնահատվել է **67 երեխա**, որոնցից **23-ի** պարագայում իրականացվել է առաջնային գնահատում:

Մասնավորապես՝

**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների (ԿԱՊԿ)** գնահատում է անցել **28** երեխա, որոնցից **9-ի** համար այն եղել է առաջնային.

**Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքների (ԿԶԱՊԿ)** գնահատում է անցել **39 երեխա**, որոնցից **14-ի** դեպքում իրականացվել է առաջնային գնահատում:

*ԿԶԱՊԿ գնահատումների գերակշռող թիվը (39 երեխա) փաստում է նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում զարգացման առանձնահատկությունների վաղ հայտնաբերմանն ուղղված աշխատանքների ակտիվացման մասին: Առաջնային գնահատումների բարձր տեսակարար կշիռը վկայում է համայնքներում և ուսումնական հաստատություններում իրազեկվածության բարձրացման և դեպքերի ժամանակին ուղղորդման արդյունավետ մեխանիզմների մասին:*

**2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

Կիսամյակի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿ) **182** երեխաներից՝

- 150-ը փաստացի ստացել է մանկավարժահոգեբանական աջակցություն ՏՄԱԿ-ի կողմից
- 3-ը աջակցություն է ստացել միայն հանրակրթական դպրոցների կողմից
- 22 երեխայի ծնող հրաժարվել է տրամադրվող ծառայություններից
- 3 երեխա տեղափոխվել է այլ մարզ
- 4 երեխայի աջակցության գործընթացը մնացել է բաց:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿ) **85** երեխաներից՝

- 67-ը աջակցություն է ստացել ՏՄԱԿ-ի կողմից
- 12-ը աջակցություն է ստացել միայն ՆՈՒՀ-ի (նախադպրոցական ուսումնական հաստատության) կողմից
- 6 երեխայի աջակցության գործընթացը մնացել է բաց։

✓ ՄԿՈՒ հաստատություններում մանկավարժահոգեբանական աջակցություն է ստացել **2 երեխա**։

Հաշվետու շրջանում աջակցության գործընթացից բաց թողնված դեպքերը (**4 դպրոցահասակ** և **6 նախադպրոցական տարիքի** երեխաներ) պայմանավորված են եղել հետևյալ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով.

- Երեխաների հաճախակի բացակայություններ,
- Աջակցող մասնագետների ժամանակավոր բացակայություն,
- ՆՈՒՀ-երի գործունեության ժամանակավոր դադարեցում (շենքային պայմանների վերանորոգման պատճառով)։

Նշված բոլոր **10 դեպքերը** ներառվել են ՏՄԱԿ-ի առաջնահերթությունների պլանում։ Հաջորդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է իրականացնել թիրախային աշխատանքներ՝ այս երեխաներին տրամադրվող մանկավարժահոգեբանական ծառայությունների ծավալը լիարժեքորեն վերականգնելու նպատակով։

### 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված վերապատրաստման դասընթացների ուղղվածությունը սահմանվել է՝ հիմք ընդունելով տարեսկզբին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները և ուսումնական հաստատությունների կարիքների գնահատման արդյունքները։

Եռամսյակի ընթացքում Վայոց ձորի մարզում իրականացվել է ընդհանուր թվով **73 վերապատրաստման դասընթաց**, որոնց մասնակցել է **923 մասնագետ և ծնող**։

- **Հանրակրթական ուսումնական հաստատություններ (46 դպրոց).**

*Միջնակարգ դպրոցներ*՝ Ազարակաձորի, Աղավնաձորի, Աղնջաձորի, Ազատեկի, Արենիի, Արինի, Արտաբույնքի, Արտավանի, Արփիի, Բարձրունու, Գետափի, Գլաձորի, Գնդևազի, Գողթանիկի, Գոմքի, Եղեգիսի, Ելփինի, Զառիթափի, Թառաթումբի, Խնձորուտի, Հերհերի, Մալիշկայի (թիվ 1 և թիվ 2),

Մարտիրոսի, Չիվայի, Ռինդի, Վարդահովիտի, Վերնաշենի, Քարագլխի, Շատինի, Խաչիկի, ինչպես նաև Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցները:

*Հիմնական դպրոցներ*՝ Եղեգնաձորի թիվ 1 և թիվ 2, Վայքի, Սերսի, Սարավանի, Ձեղեայի, Սալիի, Հորսի, Հորբատեղի, Հերմոնի և Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցները:

*Ավագ դպրոցներ, վարժարաններ և կրթահամալիրներ*՝Վայքի ավագ դպրոց, Եղեգնաձորի վարժարան և Ջերմուկի կրթահամալիր:

- **Նախադպրոցական ուսումնական հաստատություններ (13 մանկապարտեզ).**

Վայքի թիվ 1 և թիվ 3, Մալիշկայի թիվ 1 և թիվ 2, Եղեգնաձորի թիվ 2 (մսուր-մանկապարտեզ) և թիվ 5, Գլաձորի, Արենիի, Արփիի, Զառիթափի, Ելփինի մանկապարտեզներ, Գետափի «Արևիկ» մսուր-մանկապարտեզ և Ջերմուկի «Զատիկ» մանկապարտեզ:

- **Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (2 ՄԿՌԻ).**

Ջերմուկի կրթահամալիր և Եղեգնաձորի պետական քոլեջ:

ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից մանկավարժական անձնակազմերին փոխանցվել են կիրառական գիտելիքներ և գործնական հմտություններ, ինչն ուղղված է աջակցության ծառայությունների որակի բարձրացմանը և ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների արդյունավետության ապահովմանը:

| Հ/Հ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Անհատական ուսուցման պլան | 14 |
| 2 | Համընդհանուր ներառումը ՀՀ-ում | 17 |
| 3 | Ռիսկային իրավիճակներ ,արձագանքման մեխանիզմներ | 8 |
| 4 | ՈՒսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ | 258 |

| | | |
|---|---|---|
| 5 | Անվտանգ և ապահով կրթական միջավայր | 6 |
| 6 | Աշխատանք ՆՈՒՀ-ում մտավոր (ճանաչողական) գործընթացների խանգարումներ ունեցող երեխաների հետ | 29 |
| 7 | Կրթության աջակցող միջոցներ․ մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 441 |
| 8 | Գիտակից ծնողավարությունը, որպես երեխայի զարգացման կարևոր գործոն | 79 |
| 9 | Դեռահասների հոգեբանական առանձնահատկությունները, ծնող լինելու մարտահրավերները | 30 |
| 10 | Ուսուցիչ - ծնող արդյունավետ համագործակցությունը որպես կրթության որակի բարձրացման գործոն | 17 |
| 11 | Ծնողավարումը թվային դարում | 13 |
| 12 | Օգնենք օգնողներին | 11 |

Հաշվետու ժամանակաշրջանում ՏՄԱԿ-ի մասնագիտական թիմը շարունակաբար կատարելագործել է իր հմտություններն ու կարողությունները՝ ակտիվորեն մասնակցելով տեղական և միջազգային կրթական ծրագրերին, վեբինարներին ու վարպետաց դասերին:

Մասնավորապես՝ թիմն ընդգրկվել է Ամերիկայի «Պերկինս միջազգային կույրերի դպրոցի» (Perkins International) աջակցությամբ և Խորվաթիայի «Մալի Դոմ» (Mali Dom) կազմակերպության մասնագետների կողմից պատրաստված վեբինարների շարքում՝ անցնելով «Բուժական կերակրում» և «Զգայական ուսումնառություն» դասընթացները, որոնք ուղղված են բազմակի հաշմանդամություն ու զգայական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) կողմից կազմակերպված վերապատրաստումների շրջանակում կենտրոնի մասնագետները մասնակցել են «Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործիքակազմը» առցանց դասընթացին և հաջողությամբ անցել «Ընտանիքում բռնության դեպքերին արձագանքելու և ուղղորդելու մեխանիզմներն ու առանձնահատկությունները» դասընթացավարների վերապատրաստման ծրագիրը (TOT), որը նախատեսված է ՏՄԱԿ-ի տնօրենների և հոգեբանների համար: Բացի այդ, թիմն անցել է ՀՄԿ-ի իրազեկման հատուկ դասընթացը՝ նվիրված դպրոցահասակ երեխաների շրջանում թմրամիջոցների օգտագործման ռիսկերին, դրանց ֆիզիկական ու հոգեկան ազդեցությանը, վարքային նշանների վերհանմանն ու անչափահասների շրջանում կանխարգելման հնարավոր ուղիներին:

Մասնագիտական կարողությունների զարգացմանը զուգահեռ՝ ՏՄԱԿ-ի թիմն ակտիվորեն ներգրավվել է «ԲԻ ԴԻ Օ» կազմակերպության նախաձեռնած մարզային ֆոկուս խմբային քննարկումներում, որոնք նպատակաուղղված են եղել մարզի խոցելի խմբերի խնդիրների համակողմանի վերհանմանը, կարիքների գնահատմանը և համապատասխան լուծման առաջարկների մշակմանը:

Կենտրոնի մասնագիտական ներուժի հզորացման և բարդ դեպքերի վարման արդյունավետության բարձրացման նպատակով, Մանկական զարգացման հիմնադրամի նախաձեռնությամբ, ՏՄԱԿ-ի մասնագիտական թիմի համար կազմակերպվել է **2 նպատակային սուպերվիզիոն հանդիպում**: Սուպերվիզիաները հատուկ թիրախավորված են եղել նեղ մասնագետների գործունեության արդյունավետության բարձրացմանը.

- **Լոգոպեդների համար**՝ «Չխոսող երեխայի հետ աշխատանքի ռազմավարություններ» թեմայով, որի շրջանակներում քննարկվել են հաղորդակցման այլընտրանքային միջոցների ներդրման և խոսքային հապաղումների հաղթահարման ժամանակակից մեթոդները:
- **Հոգեբանների համար**՝ «Աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատանքում հոգեբանի դերը, ֆունկցիաները, կիրառվող տեխնիկաներն ու մեթոդները» թեմայով, որն ուղղված էր աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների վարքային թերապիայի և սոցիալականացման հմտությունների զարգացման գործնական գործիքակազմի հարստացմանը:

## 4. Խորհրդատվություն

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի կողմից արձանագրվել է խորհրդատվության դիմելիության բարձր ցուցանիշ: Իրականացվել է ընդհանուր թվով **229 խորհրդատվական հանդիպում**, որոնցում ընդգրկվել է **991 անձ** (ծնողներ, ուսուցիչներ, դպրոցների վարչական կազմ):

Խորհրդատվական աջակցությունն ուղղված է եղել անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) կազմման, փաստաթղթաշրջանառության վարման, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

**5. Մշտադիտարկում**

Ուսումնական հաստատություններում իրականացվող աշխատանքների որակի ապահովման, իրավական համապատասխանության և տեղում մասնագիտական աջակցության տրամադրման նպատակով՝ ՏՄԱԿ-ի փորձագիտական թիմը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է **67 մշտադիտարկման այց**:

Այցերի բաշխվածությունը ըստ հաստատությունների տիպերի․

- Հանրակրթական ուսումնական հաստատություններ (դպրոցներ)՝ 47 այց.
- Նախադպրոցական ուսումնական հաստատություններ (մանկապարտեզներ)՝ 18 այց.
- Միջին մասնագիտական ուսումնական (ՄԿՈՒ) հաստատություններ՝ 2 այց:

Մշտադիտարկումների առանցքում եղել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համակարգային վերահսկողությունը, ինչը ներառել է՝

- Ստուգվել է պլանների մշակման ճշգրտությունը, տվյալների արժանահավատությունը և փաստաթղթավորման համապատասխանությունը սահմանված կարգին:
- Դիտարկվել է ուսումնական հաստատությունների ֆիզիկական և դիդակտիկ միջավայրի հարմարեցվածությունը ԿԱՊԿ/ԿՀԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին:
- Մշտադիտարկման արդյունքում վերհանված բացերն ու դժվարությունները անմիջապես քննարկվել են տվյալ հաստատության մանկավարժական կազմի հետ: Այս արդյունքները հիմք են հանդիսացել հաջորդ եռամսյակի վերապատրաստումների թեմատիկ պլանավորման և նպատակային թիրախավորման համար:

**6. Համագործակցություն**

Կիսամյակի ընթացքում ՏՄԱԿ-ը ծավալել է ակտիվ միջգերատեսչական գործունեություն՝ ամրապնդելով կապերը պետական, համայնքային և հասարակական կառույցների հետ:

**Համագործակցություն ՀՄԿ մենթորների հետ․**

- **Մասնագիտական վերապատրաստումներ.** Համատեղ դասընթացներ են անցկացվել Վերնաշենի և Գետափի միջնակարգ դպրոցների մանկավարժական աշխատողների համար՝ ուղղված անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) կազմման գործնական հմտությունների զարգացմանը:
- **Դեպքերի արձագանքման դասընթաց.** Մալիշկայի №2 միջնակարգ դպրոցում անցկացվել է դասընթաց՝ «Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման ու ուղղորդման մեխանիզմներ» թեմայով:
- **Աշխատանքային հանդիպումներ.** Կազմակերպվել է հանդիպում ՀՄԿ մենթորների հետ՝ դպրոցներում երեխաների պաշտպանությանն ուղղված համատեղ վերապատրաստումների օրակարգն ու մեթոդաբանությունը համակարգելու նպատակով:

**Համագործակցություն Միասնական սոցիալական ծառայությունների (ՄՍԾ) և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) հետ**

- **Համատեղ տնայցեր և կարիքների գնահատում.**
  - Մալիշկա բնակավայրում Մանկական զարգացման հիմնադրամի (ՄԶՀ) ցերեկային ծրագրի և համայնքային սոցիալական աշխատողների հետ համատեղ իրականացվել է տնայց՝ սովորողի վարքային դժվարությունների բազմակողմանի դիտարկման նպատակով: Ընտանիքին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն և սահմանվել են երեխայի աջակցության հետագա քայլերը:
  - Գետափ համայնքում Եղեգնաձորի համայնքային սոցիալական աշխատողների հետ համատեղ այցելություն է կատարվել ռիսկի խմբում գտնվող ընտանիքին, որտեղ իրականացվել է կարիքների համապարփակ գնահատում:
- **Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում.** Սերտ համագործակցության արդյունքում Եղեգնաձոր և Մալիշկա համայնքներում հայտնաբերվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած **2 երեխա**: Նրանց կրթության իրավունքի վերականգնման գործընթացն այժմ գտնվում է ՏՄԱԿ և մարզպետարանի անմիջական վերահսկողության ներքո:
- **Խնդիրների հասցեագրում և հանդիպումներ ծնողների հետ.** Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ համատեղ աշխատանքային հանդիպում է կազմակերպվել Արտաբույնքի միջնակարգ դպրոցի ծնողական համայնքի հետ՝ ուղղված դպրոցում առկա դժվարությունների քննարկմանն ու կոնֆլիկտների հաղթահարմանը:
- **Մասնակցություն սոցիալական ֆորումների.** ՏՄԱԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են Ջերմուկի, Վայքի և Եղեգնաձորի Միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՄՍԾՏԿ) կողմից կազմակերպված սոցիալական համագործակցության ֆորումներին: Հանդիպումների ընթացքում գործընկեր կառույցներին են ներկայացվել ՏՄԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններն ու աջակցության տեսակները, գործունեության աշխարհագրությունը, ինչպես նաև կենտրոն դիմելու կարգն ու ընթացակարգերը:
- **Ծնողավարման դասընթացներ.** ՄՍԾ Ջերմուկի տարածքային կենտրոնի հրավերով կենտրոնում հյուրընկալված ՏՄԱԿ-ի մասնագետները համայնքի ծնողների համար անցկացրել են դասընթաց՝ «Գիտակից ծնողավարությունը որպես երեխայի զարգացման կարևոր գործոն» թեմայով: Նախաձեռնության նպատակն էր ամրապնդել ծնողների գիտելիքներն ու կարողությունները երեխայի զարգացման և առողջ միջանձնային հարաբերությունների ձևավորման գործընթացում:

Կենտրոնի անվանումը՝ Մանկական զարգացման հիմնադրամ

Տնօրեն՝ Լուսինե Սիմոնյան

*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

« 01» «07» 2026թ.